

ՀՈՒՅՁԵՐԻ ՀՈԳԵԼԵԶՎԱԿԱՆ ԳՈՑԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ա. Վ. ՍԱՅԱԿՅԱՆ

Խոսքային գործունեության մեջ հույզերի ունեցած տեղի և դերի խնդիրը հոգելեզվաբանությանը մշտապես հուզող հարցերից է: Դեռևս Լ. Ս. Վիգոտսկին, որ իրավամբ համարվում է հոգելեզվաբանության ուսական դպրոցի հիմնադիրը, խոսքի խորքային պլանների իր հայեցակարգում խիստ կարևորում էր հույզերի ուսումնասիրությունը: Խոսքի և մտածողության ստորակարգային ծավալման ակունքներում, նրա համոզմամբ, հոգեկանի հուզական-կամային ոլորտն է, որն էլ միայն «մտածողության վերլուծության գործընթացում կարող է պատասխանել վերջին «իմչու»-ին»:

Լ. Ս. Վիգոտսկու հայացքները զարգացվում են գործունեության տեսության մեջ, որտեղ այս խնդրի լուծումը սերտորեն կապվում է գիտակցության սահմանման հետ: Մասնավորապես Ա. Ն. Լեոնտևի կարծիքով՝ հույզերի թե՛ բնախոսական, թե՛ կոգնիտիվ տեսությունների ձախողումը բացատրվում է «գիտակցության՝ իբրև գիտելիքի ըմբռնմամբ»²: Ըստ Ա. Ն. Լեոնտևի, գիտակցությունն իր հոգեբանական բովանդակությունը ձեռք է բերում անհատի կենսական հարաբերություններն արտացոլելու միջոցով, որի շնորհիվ էլ այն դառնում է իմաստավոր: Այդ է պատճառը, որ Ա. Ն. Լեոնտևը գիտակցության կառուցվածքում օբյեկտիվ գիտելիքը ներկայացնող երկու միավորներից՝ նշանակությունից և զգայական հյուսվածքից բացի, տարբերակում է նաև իմաստը, որը, նրա մեկնաբանությամբ, արտացոլում է սուբյեկտի իրական կենսագործունեության մոտիվները, արժեքները, հույզերը: Իր հոգելեզվաբանական հայեցակարգում Ա. Ս. Լեոնտևը այս երեք միավորները համարում է նաև լեզվական նշանի բովանդակության երեք հիմնական բաղկացուցիչները, իսկ լայն առումով՝ նաև խոսքային գործունեության ծավալման երեք հիմնական ուղղությունները³:

Ի տարբերություն զգայական հյուսվածք-նշանակություն առանցքում զարգացող հասկացական գործունեության՝ իմաստաստեղծման գործունեությունը սերտորեն կապված է հոգեկանի հուզական ոլորտի հետ: Հույզերը «իմաստի խնդիր են դնում»⁴, այսինքն՝ ազդանշանով տեղի ունեցողի կարևորությունը անհատի մոտիվների տեսանկյունից՝ իմաստավորման պահանջ են ներկայացնում գիտակցությանը:

Ա. Ն. Լեոնտևի հետևորդները շատ ավելի սերտ կապեր և խորը փոխադարձ անցումներ են տեսնում հույզ-իմաստ հարաբերություններում: Մասնավորապես Վ. Կ. Վիլյունասը անհատական իմաստի գոյության անմիջական, ոչ բառային ձև է համարում հույզը՝ հակադրելով այն իմաստի՝ լեզվական ձևավորում ստացած ձևին: Հույզը նա դիտարկում է իբրև իմաստի զարգացման հիմնարար փուլ⁵: Հույզի և իմաստի միահյուսված գոյակցությունն են ենթադրում նաև Ֆ. Վ. Բասինի «նշանակալից ապրումի»⁶,

¹ А. Н. Леонтьев. Избранные психологические произведения, т. 1, М., 1983.

² Л. С. Выготский. Мышление и речь, М.-Л., 1934, с. 294-295.

³ Տե՛ս Ա. Ա. Леонтьев, Слово в речевой деятельности. Некоторые проблемы общей теории речевой деятельности, М., 1965:

⁴ Տե՛ս Ա. Н. Леонтьев, Деятельность. Сознание. Личность, М., 1975:

⁵ Տե՛ս В. К. Виллюнас, Психология эмоциональных явлений, М., 1976:

⁶ Տե՛ս Ф. В. Бассин, О развитии взглядов на предмет психологии, "Вопросы психологии", М., 1971, № 4:

Ա. Վ. Զապորոժեցի «հուզական-ճանաչողական կոմպլեքսների»⁷, Ֆ. Ե. Վասիլյուկի «ապրումի» իբրև իմաստաստեղծ գործունեության⁸, գիտակցության իմաստային տեսության մեջ «դինամիկ իմաստային համակարգի» գաղափարները: Նշված բոլոր մոտեցումներում առկա ընդհանրությունները լավագույնս ամբողջանում են դինամիկ իմաստային համակարգի հասկացության մեջ, որը, ըստ հեղինակների, ինտեգրված ճանաչողական և հուզական պրոցեսների այնպիսի մի դինամիկ համակարգ է, որտեղ հույզերը «խելացի» են դառնում, իսկ ճանաչողական պրոցեսները ձեռք են բերում հուզական - պատկերային բնույթ, դառնում իմաստավոր⁹:

Դինամիզմից և պատկերավորությունից բացի, գործունեության հիմքում ընկած հուզական-իմաստային նշված կազմավորումներին վերագրվում է նաև կոնսոհնուալություն, քազմիմաստություն, սուբյեկտիվություն, անկայունություն և այլ հատկանիշներ, ինչպես նաև հոգեկան արտացոլման տարբեր՝ անգիտակցական և գիտակցական մակարդակներում սահմանային գոյություն: Այս առումով հետաքրքիր է դեռ Լ. Ս. Վիգոտսկուց եկող այն ենթադրությունը, որ գիտակցականի և անգիտակցականի սահմանին, այնտեղ, ուր միտքը մինչխոսքային բնույթ ունի, մենք գործ ունենք ինտելեկտի և աֆեկտի կոնսոհնու-մի հետ, և միայն լեզվական նշանակության մուտքով է տեղի ունենում արտացոլման այդ երկու կողմերի տարանջատում և դիսկրետացում: Հոգեկանի այս մակարդակում աշխարհն արտացոլվում է իբրև անընդհատ ամբողջ, ըմբռնվում հուզական ապրումի պես անմիջականորեն, միանգամից, առանց խոսքային մտածողության վերլուծական ջանքերի: Թե՛ ֆիլոզոգենեզում, թե՛ օնտոգենեզում լեզվի յուրացումը հանգեցնում է արտացոլման սկզբնապես միասնական ճանաչողական և հուզական կողմերի տարանջատմանը, ավելի ճիշտ՝ գործառույթների տարբերակմանը. առաջինն ուղղվում է արտաքին առարկայական աշխարհի արտացոլմանը, երկրորդը՝ ներկայացնում է ճանաչվող իրականության նշանակալիությունը անհատի պահանջմունքների տեսանկյունից:

Լեզվակիր մարդու գիտակցության նշված երկու կողմերի մի նոր վերամիավորում, սուբյեկտի և նրա կողմից իր հույզերի կամային կառավարման կորուստ հնարավոր է կրոնական էքստագին և ստեղծագործական ներշնչման պահերին գուգորդող այսպես կոչված «անդրանցական հույզերում»¹⁰, որոնք ձուլում են անհատի ներաշխարհը անդրանցական օբյեկտի կամ սուբյեկտին (Աստված, տիեզերական գիտակցություն և այլն): Այս դեպքում արդեն գործ ունենք հույզերի ոչ թե մինչլեզվական, այլ վերլեզվական շմիջնորդվածության հետ:

Քանի որ խոսքային գործունեության տեսության մեջ հույզն առավելապես կապված է լեզվական նշանի բովանդակության իմաստային կողմի հետ, ապա հույզ-լեզու հարաբերությունների բացահայտման տեսանկյունից կարևոր նշանակություն կարող են ունենալ և՛ լեզվական նշանի բովանդակության, և՛ գիտակցության կառուցվածքի իմաստային կողմի նեղ-անհատական մեկնաբանության հաղթահարման փորձերը:

Ըստ Դ. Ա. Լեոնտևի, օրինակ, իմաստը ի սկզբանե հասարակական բնույթ ունի: Իր մոտեցումը նա հիմնավորում է գործունեության տեսության մեջ ընդունված այն դրույթով, որ արտացոլվող իրականության իմաստային կողմը թելադրված է անհատի գործունեությանը: Մինչդեռ, ըստ Դ. Ա. Լեոնտևի, իրականում գոյություն չունի զուտ անհատական գործունեություն: «Գործունեության բոլոր ձևերի սկզբնական և իրական սուբյեկտը կոլեկտիվ սուբյեկտն է և միայն գործունեության կոլեկտիվ ձևերի ողջ քազմազանության մեջ ներգրավվելով է անհատը ձեռք բերում սուբյեկտիվություն, անհատական գործունեության ակտիվ և գիտակցված ձև»¹¹:

⁷ Տե՛ս Ա. В. Запорожец, Я. З. Неверович, К вопросу о генезисе, функции и структуре эмоциональных процессов у ребенка, "Вопросы психологии", М., 1974, № 6:

⁸ Տե՛ս Փ. Е. Васильюк, Психология переживания, М., 1984:

⁹ Տե՛ս И. А. Василев, В. Л. Поплуцкий, О. К. Тихомиров, Эмоции и мышление, М., 1980:

¹⁰ Տե՛ս J. A. Averill, A Constructivist View of Emotions // Emotion: Theory, Research and Experience. Volume I, 1980.

¹¹ Д. А. Леонтьев. Значение и личностный смысл: две стороны одной медали. "Психологический журнал", т. 17, № 5, 1996.

Իմաստի հասարակական բնույթը շեշտվում է նաև երեխայի հույզերի ծագմանն ու ձևավորմանը նվիրված ուսումնասիրություններում (Ա. Վ. Ջապարովի, Յա. Ջ. Նևերովիչ), որտեղ նշված գործընթացները ուղղակիորեն կապվում են երեխայի կողմից մարդկային հարաբերությունների հիմնական նորմերի, մոտիվների, արժեքների յուրացման, այսինքն՝ մարդկային գործունեության հիմնական իմաստներում նրա կողմնորոշվելու կարողության հետ¹²:

Ինչպես ճանաչողության օբյեկտիվ կողմն ունի իր զգայական-անհատական (զգայական հյուսվածք) և հասկացական-հասարակական (նշանակություն) դրսևորումները, այնպես էլ սուբյեկտիվ-իմաստային կողմը կարող է պայմանավորված լինել ոչ միայն անհատի, այլև հասարակական սուբյեկտի մոտիվներով, արժեքներով, պահանջումներով, հույզերով: Գիտակցության և լեզվական նշանի բովանդակության կառուցվածքում իմաստային կողմը ևս ներկայանում է մասնավոր-անհատական և ընդհանուր-հասարակական դրսևորումներով: Անհատական իմաստը անհատի լեզվագիտակցության սեփականությունն է. լեզվական նշանի իմաստային կողմում ամրակայվում են իմաստի կոնկրետ-անհատական դրսևորումների հասարակայնացված անփոփոխակները միայն: Այսինքն՝ լեզվական նշանի միջոցով հաղորդվելու համար անհատական իմաստը անհրաժեշտորեն բեկվում է հասարակական իմաստների համակարգում: Անհատական և հասարակական իմաստները մշտական երկխոսության մեջ են. թեև հասարակական իմաստների համակարգը անհատական իմաստների ձևավորման անհրաժեշտ հիմքն է, սակայն այն նույնպես փոփոխվում է անհատական իմաստների հետ մշտական փոխազդեցության արդյունքում: Այս երկխոսության իրականացման առաջամարտիկը լեզուն է, որի միջոցով են հիմնականում հաղորդվում և ներմիտվում իմաստները:

Մարդկային լեզուն, սակայն, հասարակական իմաստների մարմնավորման միակ միջոցը չէ: Հասարակական իմաստները կարող են պահպանվել և հաղորդվել ամենատարբեր նշանային համակարգերի և վարքի կադապրների միջոցով:

Հասարակական ցանկացած միավորի անդամ ունի միայն տվյալ ամբողջին հատուկ իմաստների համակարգ, որը տվյալ հանրության սահմաններում ստեղծում է հաղորդակցման ընդհանուր իմաստային համատեքստ՝ ապահովելով լիարժեք փոխըմբռնում: Հասարակական իմաստների այս բազմերանգ ամբողջությունը չի հաղորդակցվում ավելի լայն համատեքստում՝ միջմշակության, միջլեզվական, միջազգային և այլ փոխհարաբերություններում: Եթե նշանակությունը ներկայացնում է մարդկային հարաբերություններում առկա ընդհանուրը, ապա իմաստը առանձնահատուկի ոլորտն է, որ ներծծված է ազգային հոգեբանությամբ, մշակույթով, լեզվով:

Գործունեության տեսության շրջանակներում հիմնավորվում է ոչ միայն գիտակցության խոր հուզական բնույթը, այլև հույզերի գիտակցականությունը: Լ. Վիգոտսկին և նրա հետևորդները մեկընդմիջտ ապացուցեցին, որ բնախոսական ուղղությունից բացի, հուզական ապրումների ձևավորմանը մասնակցում է նաև գիտակցական գնահատումը: Հենց «ներքևից» ու «վերևից» եկող այս վեկտորների հատման կետում էլ առաջ են գալիս հույզի երեք կողմերը. 1. ուժգնություն, 2. նշան (դրական և բացասական), 3. որակ (խանդ, սեր, վախ):

Գործունեության տեսությունը վերջ դրեց նաև դեռևս Չ. Դարվինից եկող՝ մարդկային և կենդանական հույզերի նույնացման ավանդույթին: Այս առումով կարևոր է հույզ-լեզվական նշան կապի դիտարկումը պատմական և օճտոգենետիկ կտրվածքով: Ինչպես ցանկացած բարձրագույն հոգեկան գործառույթ, հույզը միջնորդված է «հոգեբանական գործիքներով» (Լ. Վիգոտսկի), մասնավորապես լեզվական նշաններով, որոնք իրենց բնույթով արհեստական են, հասարակական և յուրացվում են հաղորդակցման պրոցեսում: Նշանային համակարգերով միջնորդավորումը էապես վերակառուցում է հոգեկանի բոլոր պրոցեսները, որոնք սկսում են ենթարկվել տվյալ նշանային համակարգերի ձևակազմիչ օրինաչափություններին:

¹² Տե՛ս Ա. В. Запорожец, Я. З. Неверович, К вопросу о генезисе, функции и структуре эмоциональных процессов у ребенка, "Вопросы психологии", М., 1974, № 6:

Լեզվական նշանների յուրացումը և՛ օնտոգենեզում, և՛ ֆիլոգենեզում շրջադարձա-
յին է հոգեկանի համար: Լեզվական նշաններով միջնորդավորված լինելու շնորհիվ
մարդկային վարքը դառնում է գիտակցական և կառավարելի: Լեզվական պայմանական
նշանի կայուն նշանակության մեջ ամրակայված լինելու շնորհիվ մարդկային հույզերը
էականորեն տարբերվում են կենդանու՝ անմիջական, այսրոպեական պահանջմուճքնե-
րով պայմանավորված աֆեկտներից: Նշանակությունը ոչ միայն արտաքին իրականու-
թյունն է «ազատագրում» սուբյեկտի պահանջմուճքներից, հույզերից, այլև ընդհանրաց-
նում, գիտակցականացնում և վերջիվերջո կամային է դարձնում դրանք¹¹:

Օնտոգենեզում լեզվի «հուզական» միջոցները սկզբնապես օգտագործվում են ե-
րեխայի հուզական ոլորտի վրա ազդելու համար, հետագայում յուրացվելով՝ դրանք գոր-
ծիք են դառնում իր իսկ երեխայի ձեռքում և օգտագործվում են նրա կողմից ոչ միայն «ար-
տաքին» հաղորդակցման նպատակներով, այլև ներքին՝ սուբյեկտիվ պլանում՝ սեփական
հույզերը տիրապետելու, կառավարելու համար: Լեզվական միջոցները ինտերիորիզաց-
վում՝ սեփականացվում և սուբյեկտիվացվում են, ապա և միջնորդավորող տեղ զբաղեց-
նում երեխայի հուզական պրոցեսների կառուցվածքում (Ա. Վ. Ջապորոժեց)¹²: Ինչպես
նշում էր Սպիոնզան, հույզերի լեզվական ամրակայմամբ ծնվում է սուբյեկտը, որն արդեն
կարող է ճանաչել և վերահսկել ոչ միայն բնությունը, այլև սեփական ապրումներն ու
վարքը՝ ձեռք բերելով ներքին ազատություն¹³:

Լեզվական ամրակայումն ապահովում է նաև մասնավոր, անհատական ապրումի
ներգրավումը իրականության հասարակական կադապարման մեջ: Լեզվական նշանի
շնորհիվ սուբյեկտիվ ապրումը դառնում է ներքին և արտաքին քննարկման նյութ, մշակ-
վում և հասարակայնացվում է՝ անդրանցելով թե՛ հասարակական փորձը, թե՛ կոնկրետ
պահը:

Մարդու պատմական սոցիալականացումը, այնուամենայնիվ, չի հանգեցնում բնա-
կան, անմիջական աֆեկտի լիակատար միջնորդավորմանն ու վերահսկմանը: Մարդկա-
յին գիտակցված, մշակված (cultivated) հույզերում միշտ կենդանի է աֆեկտի «նեանդեր-
թալյան» դինամիկան, ինչպես որ լեզվի պայմանական նշանների համակարգում պահ-
պանվում է ձայնարկությունը՝ ասես մատնանշելով մի կողմից մարդկային հույզերի, մյուս
կողմից՝ մտածողության և լեզվի ակունքները: Հույզի յուրաքանչյուր իրական դրսևորում
աֆեկտից հույզ ընկած պատմական ճանապարհի սեղն ու շարժում մի մոդել է, որի հա-
վասարակշռությունը անհատի համար առավել նշանակալից պահերին խախտվում է՝ մի
քանի հազարամյակ հետաշարտելով նրան:

Հույզը, այսպիսով, ոչ միայն խթանում է լեզվական գիտակցության իմաստաստեղծ
գործունեությունը, հանդիսանում խոսքային գործունեության ծավալման հիմնարար մա-
կարդակը, այլև ինքն իսկ միջնորդավորված, մեծապես պայմանավորված է դրանցով:

Վերն ասվածը ամփոփելով՝ կարող ենք խոսել հույզերի լեզվական և մտածողու-
թյան հուզական կարգավորման մասին, որ համահունչ է Գ. Ա. Բրուտյանի այն մտքին, թե
լեզվի ազդեցությունը մտածողության վրա միջնորդված է հույզերով¹⁴:

Հույզերի իմաստավորումը, մշակումն ու մարդկայնացումը կատարվում է ինչպես
լեզվական ամրակայման, այնպես էլ հուզական վարքի կադապարներում դրսևորվելու
միջոցով: Ե՛վ լեզվական նշանի իմաստային կողմում, և՛ հուզական գործունեության կա-
դապարներում ամփոփված են այս կամ այն իրադրությունում հույզի արտահայտման և
ապրումի հասարակական ակնկալիքներն ու պատշաճության մասին նորմերը: Այս հան-
գամանքը հիմք է տալիս Ջ. Ավերիլիին հույզերն իրադրային հասարակական դերեր
համարելու¹⁵: Ինչպես հասարակական դերերի մեծ մասը, հուզական դերերը, հուզական

¹¹ Տե՛ս Գ. Վ. Փ. Գեգել, *Наука логики*, т. 1, М., 1970:

¹² Տե՛ս Ա. Վ. Запорожец, Я. З. Неверожич, *К вопросу о генезисе, функции и структуре эмоциональных процессов у ребенка*, "Вопросы психологии", М., 1974, № 6.

¹³ Տե՛ս Բ. Спиноза, *Этика* // Избр. произв., М., 1957, т. 1:

¹⁴ Տե՛ս Գ. А. Брутян, *Языковая картина мира, Теория познания*, т. 2, М., 1991, էջ 321:

¹⁵ Տե՛ս J. A. Averill, *A Constructivist View of Emotions* // *Emotion: Theory, Research and Experience*. Volum I, 1980:

վարքի կաղապարները ևս ենթադրում են խոսքային ճաղողդակցում: Հասարակական դերը, ըստ Ա. Ն. Լեոնտևի, անհրաժեշտաբար նաև խոսքային է, բանգի իրականացվում է ճասարակական փոխհարաբերություններում, հաղորդակցման պրոցեսում: «Գոյություն չունեն համր դերեր: Խոսքի ցանկացած ակտ իր հերթին նաև դերային գործունեություն է»¹⁶:

Լեզվական միջնորդավորման մասին դրույթը շատ ավելի մեծ հետանկարներ է ստեղծում նաև հույզի հոգեկան դրսևորման՝ ապրումի ուսումնասիրման համար, որ հոգեկանի ամենասուբյեկտիվ, հետևաբար ամենադժվար հետազոտելի կողմն է: Հուզական ապրումի կոնկրետ բովանդակությունը, դրա սուբյեկտիվ-անհատական էությունն անհնար է բացահայտել առանց հուզական ապրումը միջնորդավորող, աշխարհընկալման իր ձևերին ենթարկող լեզվի ուսումնասիրության:

Օնտոգենեզում հույզերի զարգացման ուսումնասիրությունները փաստում են, որ դրանց ողջ բազմազանության տարբերակումը տեղի է ունենում համապատասխան հուզանունների յուրացման պրոցեսում: Այլ խոսքով՝ հույզի ապրումի նշանակալիությունը անհատի համար հենց այն բովանդակությունն է, որ նա կապում է հույզը նշանակող բանի հետ: Հուզանունի վերաբերյալը լեզվական գիտակցության մեջ գոյություն չունի առանց լեզվական նշանի: Պատահական չէ, որ հույզերի շատ տեսություններում հուզական բառապաշարի իմաստաբանական վերլուծությունները անկյունաքարային են համարվում հուզապրումի բովանդակությունը բացահայտելու համար:

Մասնավորապես «հուզաբանություն» անունը ստացած գիտական ուղղությունը, որ խնդիր ունի բացահայտելու հույզերի «ազգային տեսությունները», խիստ կարևորում է հուզական բառապաշարի և դրա կիրառման կանոնների ուսումնասիրությունը: Ենթադրվում է, որ հուզանունների կիրառման կանոնները պիտի արտահայտեն հույզերի պատշաճ արտահայտման և ապրումի տեղական նորմերը: Նշված նպատակին հասնելու համար Ա. Վեժբիցկան, օրինակ, ուսումնասիրում է անելդոտները, որոնցում, ըստ նրա, հուզանունը հանդես է գալիս բառային արտահայտություն ստացած իրական հասարակական համատեքստում¹⁷:

Հուզական բառապաշարի վերլուծությունները հիմնավորում են այս կամ այն էթնիկ միավորի հուզականության չափի և ուղղվածության, ինչպես նաև բոլոր հասարակություններում առկա «թեր և գերճանաչված» հույզերի մասին պատկերացումները:

Հույզերի գեր կամ թերճանաչվածության ցուցիչ հոգելեզվաբանության մեջ համարվում է հոմանշային շարքի «երկարությունը»: Այդ առումով հայտնենում գերճանաչված հույզեր են վախը (մոտավորապես 100 հոմանիշ՝ ըստ Ա. Սուբիայանի) և զայրույթը (մոտավորապես 70 հոմանիշ)¹⁸:

Արդյո՞ք հույզերի լեզվական միջնորդավորման մասին դրույթը նշանակում է, որ հուզական ապրումի բովանդակության ուսումնասիրությունները սպալվում են լեզվաբանական - իմաստաբանական վերլուծություններով: Այլ խոսքով՝ հնարավո՞ր է հասկանալ որևէ հասարակության ներկայացուցչի հույզերի սուբյեկտիվ նշանակալիությունը «բառարանի» օգնությամբ: Այս և հույզերի հոգելեզվաբանության բազմաթիվ այլ կարևորագույն հարցերի պատասխան գտնելու տեսանկյունից առանցքային նշանակություն ունի հետևյալ երկընտրանքի լուծումը. արդյո՞ք մարդկային հույզերի ապրումային բովանդակությունը համամարդկային է, թե՞ հասարակական կաղապարման արդյունք լինելով՝ այն տարբեր է մշակույթից մշակույթ:

Հույզերի համամարդկային բնույթի օգտին են խոսում բնախոսական, նյարդաբանական, ինչպես նաև այսպես կոչված «բազային» հույզերի դիմախոսական ուսումնասիրությունները: Սակայն նշված ընդհանրությունները չեն կարող նաև դրանք ուղեկցող ապրումների ընդհանրականության երաշխիք լինել: Ինչպես ցանկացած բարձրագույն հոգեկան գործառույթ, այնպես էլ հուզական ապրումը արտաքին - հասարակական գործունեության ներմիտման արդյունք է: Հույզերի զարգացման օնտոգենետիկ ուսումնասիրությունները

¹⁶ А. А. Леонтьев. Национально-психологические аспекты этнопсихолнгвистики. Национально-культурная специфика речевого поведения. М., 1977, с. 43.

¹⁷ St'u A. Vierzbicka, Semantics, Culture and cognition, New York, 1992:

¹⁸ St'u Ա. Սուբիայան, Հայոց լեզվի հոմանիշների բառարան, Եր., 1967:

ցույց են տալիս, որ հուզական ապրումը ձևավորվում է հույզերի արտահայտում և ներքին ապրում ենթադրող ամենատարբեր իրադրություններում ակտիվ մասնակցության, այսինքն՝ արտաքին, այդ թվում և լեզվական, գործունեության ճիմքի վրա, որը հետագայում ձեռք է բերում ներքին բնույթ:

Հուզական գործունեությունը և նրա ծավալման հասարակական համատեքստը, մեղմ ասած, միևնույն բնութագրերը չունեն ամբողջ աշխարհում: Այս կամ այն հույզը զգալու և արտահայտելու պատշաճ իրադրությունների և ձևերի մասին պատկերացումները նույնը չեն թե՛ տարբեր հասարակություններում, թե՛ միևնույն մշակույթի անցած պատմական ճանապարհի զանազան հատվածներում:

Գոյությունն չունեն ապրումի արտահայտման բնական ձևեր: Մարդկային ապրումները ձևավորվում են հասարակության մեջ և հասարակության միջոցով՝ հույզերի հոգեկան դրսևորման և արտաքին արտահայտման՝ տվյալ մշակույթի սահմաններում ընդունված ձևերին հավատարիմ: Ըստ Մ. Կ. Մամարդաշվիլու՝ հենց հասարակական ձևն է «կառուցում» և կարգավորում ապրումը: Թեև երեխան ծնվում է աֆեկտիվ ռեակցիաների որոշակի բնական համակարգով, հետագայում դրանք ձևափոխվում են, մշակվում հիմք դառնալով մարդկային ապրումների ձևավորման համար²¹:

Ապրումի մշակութային պայմանավորվածության դրույթը նոր չէ: Դեռ 20-րդ դարի սկզբին մշակույթի նշանավոր տեսաբան Օավալդ Օպենզելը պնդում էր մարդկային ապրումների, զգացմունքների և առհասարակ հոգեկանի պատմամշակութային վերլուծության անհրաժեշտությունը: Օպենզելի կարծիքով՝ երեխան մարդ, այսինքն՝ իր մշակույթի անդամ դառնում է միայն նրա հոգեկանում «խորը ներքին ապրումի» արթնացումով, որն էլ նշանավորում է բառային մտածողության ծագումը²²:

Բոլոր տիպի հասարակություններում էլ հուզական գործունեությունը, ըստ էության, «ծիսական» բնույթ ունի, քանի որ այն և՛ արտաքին, և՛ ներքին պլանում իրականանում է պատմականորեն համակարգված գործողությունների միջոցով, առանց որոնց մարդն անկարող կլիներ «զլուխ հանել» անընդհատ փոփոխվող, մեկը մյուսին անցնող իր հույզերի անվերջության մեջ: Հուզական գործունեության վերաբերմամբ միանգամայն ընդունելի է կոնստեքստուալ բիհևիորիզմում ընդունված այն դրույթը, թե գործողության ընդհանուր իմաստը պետք է փնտրել հենց իր պատշաճ համատեքստում և պատշաճ կերպով կատարված գործողության մեջ:

Հույզի կոնկրետ ապրումային բովանդակությունը, այսպիսով, պայմանավորված է ողջ մշակույթի «լեզվով»՝ պատկերների, խորհրդանիշների, ձևերի, սովորույթների, նախապաշարումների համակարգերով: Այդ համակարգերը իրենց հարաբերակիցներն ունեն գիտակցության և անգիտակցականի տարբեր մակարդակներում, որտեղ էլ իրենց ձևակազմիչ օրինաչափությունները, վերլուծության և համադրության իրենց եղանակներն են թելադրում աշխարհընկալումներին: Հասկացական լեզվի հարաբերակիցը գիտակցության բարձրագույն մակարդակն է: Սակայն լեզվական նշանը, ինչպես տեսանք, իր բովանդակության իմաստային կողմով կապված է նաև նշանակությունների այլ տիպի համակարգերի հետ, որոնցում բյուրեղացած է մշակութային գիտելիքը: Մշակութային գիտելիքը կարգայնացվում է հասարակական իմաստների համակարգում, որն էլ պայմանավորում է հուզական ապրումն ու նաև միջնորդավորում հույզ-լեզու փոխհարաբերությունները: Իմաստը, ի տարբերություն նշանակության, հուզական-պատկերային բնույթ ունի: Գիտակցության իմաստային կազմավորումներն ըմբռնելու համար վերլուծական միջոցներն անօգուտ են, դրանք պահանջում են կենսական շահերի, արժեքների, մոտիվների ընդհանրություն: Որևէ մշակույթի ներկայացուցչի հույզերը հասկանալու, ոչ թե ապրումակցելու համար հարկավոր է ողջ էությամբ, ամբողջ կյանքով «մուտք գործել» իմաստների նրա համակարգի մեջ²³:

²¹ Տե՛ս Մ. Կ. Մամարդաշվիլի, *Обязательность формы*, «Вопросы философии», 1976, № 12, էջ 134:

²² Տե՛ս Օ. Շլենգլեր, *Закат Европы*, М., 1998:

²³ Տե՛ս Փ. Է. Васильюк, *Психология переживания*, М., 1985:

Քանի որ հասարակական իմաստները ներմիտվում և դառնում են անհատական գիտակցության սեփականությունը՝ ապա հուզական արտաբերական թուլացումը բացահայտելու լավագույն ուղին հենց անհատական գիտակցության ոլորտը «մուտք գործելն» է: Այս առումով է կարևորվում հույզ-լեզու կապի հոգելեզվաբանական ուսումնասիրությունը, որը, ի տարբերություն նշանակության ուսումնասիրման լեզվաբանական մեթոդների, գործ ունի ոչ թե խոսքային գործունեության ավարտուն արդյունքի, այլ լեզվի իրական կրողի գիտակցության հետ:

А. В. СААКЯН - Психолингвистическая онтология эмоций. - В статье рассматривается проблема взаимоотношений языкового сознания и человеческих эмоций. Обобщая многие психологические и психолингвистические концепции эмоций, автор статьи приходит к выводу, что эмоции регулируются языком, а сознание - эмоциями, что созвучно мысли Г. А. Брутяна об эмоциональной опосредованности влияния языка на мышление.

В статье анализируется связь эмоций с двумя единицами сознания - значением и смыслом, которые одновременно являются важнейшими образующими семантики языкового знака.

Значение является обобщением социального опыта и представляет то общее, что существует в человеческих отношениях. Смысл - это сфера специфического, которая пронизана национальной психологией, культурой, языком.

По мнению автора статьи, связь эмоция - язык опосредована системой социальных смыслов, в которых кристаллизировано культурное знание. Поэтому конкретно-субъективное содержание эмоционального переживания детерминировано культурой, социальными ожиданиями проявления и переживания эмоций, стереотипами, социальными ролям и т. д.

Все это дает автору статьи основание думать, что изучение семантики эмоциональных средств языка может стать ключом к исследованию самой субъективной стороны психики - эмоционального переживания и степени его культурной обусловленности.